ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«_27_» դեկտեմբերի 2012 թ.
թիվ 159

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 15 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մարկոսյան

11967-12
27. 12. 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«10 » դեկտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 84

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 191-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 49 4/ 2/14581 գրությունը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակչուհի Մերի Անտոնի Մուրադյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տալ նախազգուշացում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 195-1 հոդվածի կանոնները խախտելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Սարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«18» դեկտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 85

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 2-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 18-ի N 17 որոշումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակիցներին հատկացնել հավելավճար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի [illegible] գյուղական
համայնքի ղեկավարի 2012 թվականի
դեկտեմբերի 18-ի N 83 որոշման

հազ. դրամ

| h/h | Ազգանուն, անուն | Պաշտոնի անվանումը | Հավելավճար |
| --- | --- | --- | --- |
| 1 | Քոչարյան Խուրշուդ | Համայնքի ղեկ. տեղակալ | 50 000 |
| 2 | Թադևոսյան Աննա | Աշխատակազմի քարտուղար / 2.1.1 / | 100 000 |
| 3 | Բոյաջյան Ժենիկ | Աշխա. առաջատար մասն. / 3.1.1/ | 100 000 |
| 4 | Ինջիղուլյան Արփիկ | Աշխատ. 1-ին կարգի մասն./ 3.2.1 / | 30 000 |
| 5 | Հակոբյան Գայանե | Աշխատ. 1-ին կարգի մասն./ 3.2.2 / | 30 000 |
| 6 | Հարությունյան Տաթևիկ | Աշխատ.1-ին կարգի մասն./ 3.2.3 / | 50 000 |
| 7 | Կոստանյան Մարինե | Քարտուղար-մեքենագրուհի | 20 000 |
| 8 | Հայրապետովա Վարդանուշ | Հավաքարար | 20 000 |
| 9 | Կարապետյան Արթուր | Պահակ | 20 000 |
| 10 | Սայադյան Աղվան | Վարորդ | 20 000 |
| | | Ընդամենը | 450 000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

## ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«21» դեկտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 86

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով.

Ո ր ո շ ու մ եմ

1. Արմավիրի մարզի Գայ համայնքում 2013 թվականի փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Նախագահական ընտրությունների անցկացման համար սահմանել տեղամասային կենտրոններ.
   1) 19/01 ընտրական տեղամաս՝ Գայ համայնքի դպրոցի շենքը՝ Խաչատրյան փ., թիվ 2
   2) 19/02 ընտրական տեղամաս՝ Գայ համայնքի դպրոցի նոր մասնաշենքը՝ Խաչատրյան փողոց, թիվ 2/1:
2. Նշանակել տեղամասային պատասխանատուներ՝
   1) 19/01 ընտրական տեղամաս՝ Գայ համայնքի դպրոցի տնօրեն Հայկազ Հարությունյան
   2) 19/02 ընտրական տեղամաս՝ Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյան:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«21» դեկտեմբերի 2012 թվականի

# Որոշում N 87Ա

## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի երրորդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
   1) Սարյան փողոց, թիվ 3 – 4 քմ
   2) Խաղաղության փողոց, թիվ 5 – 4 քմ
   3) Իսահակյան փողոց, թիվ 1 – 4քմ
   4) Խաչատրյան փողոց, թիվ 6 – 4 քմ
2. Սույն որոշման օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Սարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «19» դեկտեմբերի 2012թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 17

## ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Խուրշուդ Քոչարյանի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. *Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին* պարգևատրել իր մեկ ամսվա աշխատավարձի դրույքաչափով՝ 115 000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ [illegible]. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 19» դեկտեմբերի 2012թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 18

## ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և հիմք ընդունելով Աննա Թադևոսյանի կիսամյակային հաշվետվությունը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել իր մեկ ամսվա աշխատավարձի դրույքաչափով՝ 113 000 (մեկ հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 19» դեկտեմբերի 2012թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 19

## ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Անահիտ Սարգսյանի գերազանց կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանին աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար [illegible]. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «19» դեկտեմբերի 2012թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 20

## ՄԱՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մանյա Կարապետյանի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքները.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի «Աշակույր» միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին պարգևատրել իր մեկ ամսվա աշխատավարձի դրույքաչափով՝ 53 000 (հիսուներեք հազար) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «19» դեկտեմբերի 2012թ.-ի

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 21

## ԶԱՎԱՀԻՐ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Զավահիր Եփրեմյանի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքները.

Կարգադրում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գրադարանի վարիչ Զավահիր Եփրեմյանին պարգևատրել իր մեկ ամսվա աշխատավարձի դրույքաչափով՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «20» դեկտեմբերի 2012թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 22

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով.

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հունվարի 10-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 1 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) Կարգադրության հավելվածից հանել երրորդ տողը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

*Հավելված*
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի [illegible] գյուղական
համայնքի ղեկավարի 2012 թվականի
դեկտեմբերի 20-ի N 22 կարգադրության

ՑՈՒՑԱԿ

1)Հանձնաժողովի նախագահ՝ - Քոչարյան Խուրշուդ (համայնքի ղեկավարի տեղակալ)

2) հանձնաժողովի անդամ՝ - Բոյաջյան Ժենիկ (աշխատակազմի առաջատար մասնագետ)

3) հանձնաժողովի անդամ՝ - Կարապետյան Մանյա («Մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն)

4) հանձնաժողովի անդամ՝ - Եփրեմյան Ջավահիր (գրադարանի վարիչ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «20» դեկտեմբերի 2012թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 23

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով,

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի «Խոտանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 24 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) Կարգադրության հավելվածից հանել երկրորդ տողը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ

*Հավելված*
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայի գյուղական
համայնքի ղեկավարի 2012 թվականի
դեկտեմբերի 20-ի N 23 կարգադրության

Ց Ո Ւ Ց Ա Կ

1) Հանձնաժողովի նախագահ՝ - Թադևոսյան Աննա (գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար)

2) հանձնաժողովի անդամ՝ - Հարությունյան Տաթևիկ (աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ)

3) հանձնաժողովի անդամ՝ - Հակոբյան Գայանե (աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ)

4) հանձնաժողովի անդամ՝ - Կոստանյան Մարինե (քարտուղարուհի-մեքենագրուհի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «21» դեկտեմբերի 2012թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 24

## ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի երրորդ մասով.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 22 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովին՝ կատարել Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գյուղապետարանի և Գայի գյուղական համայնքի «Մշակույթ» միացյալ տնօրինության գույքի գույքագրում:
2. Սույն հանձնաժողովի նախատեսված աշխատանքներն իրականացնել 1-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 27-ին
գ. Գայ